ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ԼԻՈՆԻ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ԿՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԼԻՈՆԻ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ՝ ՊԱՏՎԱՐԺԱՆ Պ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻՆ ԵՎ ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՆՎԻՐՈՒՄ ԵՆՔ ԱՌԱՔԵԼԱՇԱՎԻՂ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱԹՈՌԱԿԱԼԻ ՀԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈ ՈՂՋՈՒՅՆԸ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Լիոնի «տարագիր, աշխատավոր, հավատավոր հայկական գաղութ»ի ազգային տուն ունենալու ցանկությունը, ինչպես նաև ներկա ազգային ընտրյալ վարչությանդ «վճռական որոշումը՝ սեփական եկեղեցի, դպրոց, մատենադարան և հանդիսարան ունենալու», Մեզ՝ ծերունի Հայրապետիս, անենկարագրելի հոգեկան հաճույք և մխիթարություն է պատճառում: Հոգեկան հաճույք է պատճառում, որովհետև Կենտրոնական Ֆրանսիայի վաճառականական բնույթ կրող մեծագույն քաղաքներից մեկում՝ Լիոնում, նոր հաստատված տարագիր մի փոքրիկ հայկական գաղութ ազգային ինքնագիտակցություն ունի, իբրև Ազգ ինքնուրույն և անկախ ապրելու: Մխիթարություն է պատճառում, որովհետև այդ փոքրիկ գաղութը գիտակցում է թե՝ ազգայնապես ինքնուրույն գոյություն պահպանելու հիմնական պայմաններից մեկն է՝ իր կապը ամուր և անխզելի պահել Հայ Եկեղեցին գլխավորող Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության և նորա Կրոնապետի ու Ազգապետի հետ:

Լիոնի հայկական գաղութի եկեղեցի կառուցանելու որոշումը անփոխարինելի մի ձեռնարկ է իր ազգային գոյությունը, իր հայությունը պահպանելու համար: Հայրենիքից հեռու, օտարության մեջ ապրող պանդուխտ գաղութահայությունը, զուրկ հայրենի հոգեշունչ հուշարձաններից ու ազգային-եկեղեցական նվիրական սրբություններից, որոնք խոսում են նորա սրտի, նորա հոգու ելևէջների հետ և կենդանի պահում նորա ներքին աշխարհում ազգային ոգին, հետզհետե օտարանում է Հայ Ազգից, մարում է նորա հոգու մեջ սիրո կրակը առ Մայր Աթոռն և առ Մայր Հայրենիքը, որոնք այնքա՜ն կարևոր են ազգային ինքնագիտակցության և Ազգի ինքնուրույն գոյության համար: Սփյուռքի հայությունը կարող է իբրև հայ ապրել, երբ Հիսուս-Քրիստոսի հավատով վառված, Մայրենի եկեղեցուն փարի և հայ դպրոցին ապավինի:

Հայ Եկեղեցին դարերի ընթացքում եղած է հայության համար ոչ միայն հավատո վառարան, այլև ազգապահպանման էական ազդակ: Հայ Եկեղեցին է, որ հավատացյալների աչքն ու սիրտը դեպի ինքը դարձնելով, ի մի է խրմբում և շաղկապում իր տարագիր զավակներին, ջերմացնելով նոցա սիրտը նախնյաց ջերմեռանդությամբ և մեծագործությամբ ու առ Ազգն և Հայրենիքը ունեցած անձնվիրությամբ՝ պահելով նորան ճնադարյան հաստատության՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո:

Նյութական Եկեղեցին բարոյական շենք դարձնողը կենդանի հավատն է, իսկ հավատը կենդանի և վառ պահողը՝ անձնվեր հովիվն է: Անձնվեր հովիվն է, որ հավատացյալների միտքը լուսավորում է Ս. Ավետարանի լուսով և սիրտը ջերմացնում սիրո զգացմունքով դեպի ընկերը, և այսպես ղեկավարում է անձնվեր հովիվը հավատացյալների միտքն ու սիրտը դեպի բարին, գեղեցիկն ու ճշմարիտը՝ դաստիարակելով նոցա ճշմարիտ հավատացյալ և դարձնելով Հիսուս-Քրիստոսի ճշմարիտ աշակերտ:

Հայ դպրոցն է, որ հայ մատաղ սերունդը հայեցի է դաստիարակում և կրթում՝ մարզելով նորա միտքը Հայ Աշխարհի քաջամարտիկ նահատակների պատմությամբ և սրբազան ավանդներով: Հայ դպրոցն է, որ վառում է հայ մատաղ սերունդի սիրտը Հայրենիքի սիրով և մկրտում նորան ազգային ոգով: Հայ Եկեղեցին՝ իր անձնվեր հովիվով, և հայ դպրոցը՝ իր անձնվեր ուսուցչով ազգային ինքնագիտակցության և ազգային ինքնուրույն գոյության սյուներն են: Սոցա միացյալ ջանքերով է, որ հայությունը ամենուրեք, մանավանդ գաղութահայությունը օտար երկրներում և կուլտուրապես բարձր ազգերի մեջ կարող է անխաբար պահպանել իր ազգային ոգին և՝ իբրև Ազգ, անձույլ մնալ:

Իմ սիրելի՛ ժողովուրդ, հարգեցե՛ք և գնահատեցե՛ք կարող, բարեխիղճ և անձնվեր հովիվն. հարգեցե՛ք և գնահատեցե՛ք կարող, բարեխիղճ և անձնվեր ուսուցչին, նոքա ձեր ազգային գոյության անփոխարինելի սյուներն են:

Օրհնյալ լինի Լիոնի գաղութահայությունը, որ խորհում է ստեղծել ազգապահպանման արժեքավոր գործոններ: Աստվածային օրհնությամբ օրհնում ենք նաև Ձեզ՝ Լիոնի և շրջակայքի Ազգային միության կենտրոնական վարչության անդամներիդ, որպեսզի Ձեր ազգօգուտ և ազգաշեն ձեռնարկները հաջողությամբ պսակվին և փութով ի կատար ածվին՝ հուրախություն Մեր սիրեցյալ հոտի և ի մխիթարություն Մեր: Օրհնում ենք նաև Ձեր ընտանիքն ու զավակները և մաղթում մարդասեր Փրկչին, որ պարգևե Ձեզ և ձերայնոց առողջ ու բարօր կյանք և պատվաստե Ձեր բարեպաշտ ու ազգասեր ոգին նոցա հոգու մեջ:

Մաղթում ենք Բարձրյալին, որ Սփյուռքի մեր սիրելի հոտը առնե Իր ամենազոր Աջի հովանու ներքո և պարգևե նորան խաղաղ, անսասան և բարեր կյանք ու բարի վերադարձ ի Հայրենիս:

Աստվածային օրհնությունը, շնորհքը, սերն ու խաղաղությունը իջնի և բնակի Ձեր մեջ, որպեսզի Դուք միշտ հավատարիմ մնաք Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Հայրենիքին, նախանձախնդիր լինեք Հայրենի երկրի շինարարության ու հառաջադիմության և միմյանց հետ սիրով և խաղաղությամբ ապրեք. ամեն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20-ն ապրիլի
1953 Քրիստական ամի, և ի տումարիս Հայոց ՌՆԲ,
յիններորդում ամի Հայրապետութեան Մերոյ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի: